

Շրջակա միջավայրի վրա ազդեցության Գնահատման հաշվետվություն

Կոտայքի մարզ Ծաղկաձոր համայնք Վ.Հարությունյան փողոց 15
հասցեում նախատեսվող հյուրանոցային, սպորտի, հանգստի, և
ժամանցի համալիրի

Քաղաքացի



Համլեո Սահակյան

Երևան 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեռնարկողի մասին տեղեկություն.....3

1.1 Հապավումներ3

1.2 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը4

1.3 Նախատեսվող գործունեության բնութագիրը7

1.3.1 Նախատեսվող գործունեության նկարագիր.....7

Էներգախնայողության և էներգաարդյունավետության հետ կապված միջոցառումներ.....10

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ11

1.3.2 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում14

1.3.3 Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ14

1.3.4 Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ.....15

1.3.5 Կադրային ապահովում և շինտեխնիկա17

1.3.6 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում.....19

2.ՆԱԽՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ22

2.1 ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.....22

2.2 ԲՆԱԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ24

2.3 Օդային ավազան27

2.3 Ջրային ռեսուրսներ28

2.4 Հողերի նկարագիրը29

2.5 Հիմնային աշխատանքներ.....30

2.6 Կենսաբազմազանությունը.....30

2.7 Բուսական աշխարհ.....30

2.8 Կենդանական աշխարհ33

2.9 Բուսական աշխարհի պահպանության միջոցառումները34

2.10 Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ35

2.11 Բնության հուշարձաններ35

2.12 Բնության հատուկ պահպանվող տարածքներ38

2.13 Պատմության և մշակույթի հուշարձաններ.....39

2.14 Թափոնների կառավարում42

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆԿԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....43

3.1 ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ.....43

3.2 ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ.....44

3.3 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ44

3.3.1 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ.....44

3.3.2 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՄՆԵՐ45

3.3.3 ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՄՆԵՐ45

3.3.4 ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ.....46

3.3.5 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ46

3.3.6 ԱՂՄՈՒԿԻ և ԹՐԹՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ48

4. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ52

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....53

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ56

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....25

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ26

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձեռնարկողի մասին տեղեկություն

Ձեռնարկող՝

Համլետ Սահակյան

Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝

Ք.Երևան, Խորենացու փող.211 տուն.

Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝

Ծաղկաձոր, Վ.Հարությունյան 15

Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝

Կոտայքի մարզ, քաղաք Ծաղկաձոր

1.1 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.2 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Նախատեսվում է Կոտայքի մարզ, Ծաղկաձոր, Ծաղկաձոր համայնք Վ.Հարությունյան փողոց 15 հասցեում հյուրանոցային, սպորտի, հանգստի, և ժամանցի համալիր կառուցել:

Համալիրի աշխատանքային նախագիծը իրականացվել է գործող նորմատիվ փատաթղթերի պահանջներին համապատասխան:

Նախատեսվող գործունեության նպատակն է կառուցել ժամակակից լուծումներով համալիր:

Համաձայն 2023թ. մայիսի 3-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Համալիրի աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Իրավական հիմքերը

Նախատեսվող գործունեության կազմակերպումն իրականացվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթաօրենսդրական ակտերի) այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանության և մասնավորապես նախատեսվող գործունեության կարգավորման հետ: Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Հողային օրենսգիրք (02.5.2001թ.),
2. ՀՀ Ջրային օրենսգիրք (04.6.2002թ.),
3. «Թափոնների մասին» ՀՀ օրենք (24.11.2004 թ.),
4. «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենք (07.02.2012թ.),
5. «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (01.11.1994թ.),
6. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (03.05.2023թ, ՀՕ-150-Ն):
7. «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (11.04.2005թ),
8. «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք (30.05.2001թ),
9. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին»
10. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման «Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին»
11. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրաման «Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին»
12. ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 121-Ն որոշում,

13. ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» N 430-Ն հրաման:

14. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006.),

15. «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.),

16. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.),

17. ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում,

18. ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում,

19. ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում,

20. ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա որոշում,

21. «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշումը:

22. ՀՀ կառավարության 12.04.2018թ. N426-Ն որոշում

23. ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N 108-Ն որոշում:

24. ՀՀ առողջապահության նախարարի 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրաման «Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիրբացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին:

25. ՀՀ քաղաքաշինության նախարարի հրամանը ՀՀՇՆ 22-04-2014 <<Պաշտպանություն աղմուկից>> Շինարարական նորմերն հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին:

1.3 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.3.1 Նախատեսվող գործունեության նկարագիր

Մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր ք. Վ. Հարությունյան փողոց 15 հյուրանոցային, սպորտի, հանգստի և ժամանցի համալիրի կառուցման նախագծի ճարտարապետահատակագծային առաջադրանքի համար հիմք են հանդիսացել հավաքագրված նյութերը, կառուցապատողի հայտը, անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման հ.՝14012020-07-0070 հողամասի վկայականը և իր հատակագծային ու ծավալատարածական լուծմամբ պայմանավորված պատվիրատուի կողմից տրված առաջադրանքը: Հյուրանոցային համալիրը Վ. Հարությունյան փողոցի կողմից բաղկացած է՝ 8 վերգետնյա, իսկ բակի կողմից 5 վերգետնյա հարկերից, ինչպես նաև 3 ստորգետնյա հարկերից և շահագործվող տանիքից: -11,70 և -8,10 ստորգետնյա 2 հարկերում նախատեսված են 57 ավտոկայանատեղիներ և ավել ավտոմեքենայի տեղեր, որոնցից 5-ը սահմանափակ կարողություններով մարդկանց համար: -4,2 կիսաստորգետնյա հարկում նախատեսված են հասարակական տարածքներ, ընդհանուր հարկը բաժանված է երեք հատվածամասերի՝ երեք մուտքով, որոնցից երկու մուտքը հասարակական նշանակության է իսկ մեկ մուտքը նախատեսված է հյուրանոցային զոնայի համար և յուրաքանչյուրի համար նախատեսված է 2-ական վերելակ, ինչպես նաև նախատեսված է մեկ բեռնատար վերելակ՝ ընդհանուր շենքի սպասարկման համար: Բեռնատար վերելակը նախատեսված է նաև հրշեջների և հրշեջ սարքավորումների սպասարկման համար: Ստորգետնյա ավտոկանանատեղիների հարկերը առանձնացված են հասարակական հարկից հրդեհակայուն EI 60 մակնիշի դռներով: Բնակելի հարկերի միջանցքները առանձնանում են աստիճանավանդակներից EI 60 մակնիշի հակահրդեհային դռներով: Յուրաքանչյուր հարկում նախատեսվում են տեղադրել «ելք» ազդանաշանով լուսարձակներ հակահրդեհային դռների վերին մասում: Աստիճանավանդակի դռները հակահրդեհային են և ինքնափակվող: Կնախատեսվեն հրշեջ հիդրանտներ(շենքից 200մ շառավղով բացակայության դեպքում): Ամբողջ շինությունում նախատեսված է սպրինկլերային հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգ: 0,00 նիշում նախատեսված են հասարակական տարածքներ: 3,600 նիշում նախատեսված է սննդի ընդունման կետ՝ սառը խորտիկների: 6,90 նիշում նախատեսված է հյուրանոցային մաս, ֆոյե և սպասարկման համար նախատեսված հատվածներ՝ 2 ծխացող աստիճանավանդակով և չորս վերելակներով և մեկ սպասարկման համար նախատեսված վերելակով: 6.9, 10.20, 13.50, 16.8 նիշերում նախատեսված են հյուրանոցային համարները: 20.1 նիշում նախատեսված են հյուրանոցային համարները, ինչպես նաև նախատեսված է սպա սրահ: 23.4 նիշում նախատեսված է՝ սպա սրահ, լողավազան, սպորտի սրահ: 26.7 նիշում նախատեսված

են վերելակների, աստիճանավանդակների տեխնիկական սպասարկման մասը, ինչպես նաև տեղակայված է շենքը սպասարկող ինժեներական մասերը/ օդորակում, ջեռուցում/, տանիքը շահագործվող է: Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամների սպասարկման համար հասարակական հարկերում և ստորգետնյա ավտոկայանատեղիում նախատեսվել են սանհանգույցներ: Վերելակների և դռների չափերը հարմարեցված են սակավաշարժ խմբերի և հաշմանդամների հարմարավետ տեղաշարժվելու համար: Ջեռուցման և հովացման համակարգը նախատեսվում է <Չիլեր-կաթսա-ֆանկոյլ> երկխողովականի համակարգ, որն իրենից ենթադրում է որպես ջերմարտադրող սարք ունենալ կաթսա(ներ), իսկ որպես ցրտարտադրող սարք չիլլեր, ջերմացրտահաղորդականությունն էլ ապահովվում է ֆանկոյլներով: Այս համակարգի ընտրությունը կատարվել է կրկին տեխնիկատնտեսական հաշվարկների վրա հիմնված ինչպես նաև հաշվի առնելով համակարգի հուսալիությունը, պարզությունը և հետագա հեշտ սպասարկումը: Օդի ներածման սարքերի ջերմափոխանակիչների ջերմա-սառնա մատակարարումը իրականացվում է նախատեսված չիլլեր-կաթսա ցրտա-ջերմա արտադրող ավտոնոմ կայանքից: Որպես համակարգի ջերմակիր (ցրտակիր) հանդիսանում է ջուրը, որը որպես հաշվարկային ջերմաստիճան ընդունված է՝ 80/60C ջեռուցման ժամանակաշրջանում և 7/12C հովացման ժամանակաշրջանում: Ջերմակիրը (ցրտակիրը) մղվում է դեպի սպառիչներ կաթսայատանը նախատեսված պոմպով և արդեն իսկ սպառիչների մոտ նախատեսվում է հիդրավիլի միացման հանգույց: Հողամասը իրենից ներկայացնում է բարդ ռելիեֆ: Ներկա պահին դիտարկվող հողամասում գոյություն ունեն հանգստի համար նախատեսված շինություններ: Հողամասում առկա է քանդման ենթակա 3 շինություններ: Հողամասի շրջակայքում գտնվող շինությունները իրենց նշանակությամբ հիմնականում հանգստյան տներ և հյուրանոցներ են: Դրանց հեռավորությունները հողամասի սահմանից տատանվում են 7.7 մ-ից 41.5 մ- ի շրջակայքում: Գետի և հողամասի սահմանի միջև եղած հեռավորությունները տատանվում են 3 մ-ից 30 մ և որոշակի հատվածներում 30 մ-ից ավել: Կառուցվող համալիրի հեռավորությունը գետից 22 մ և հասնում է մինչև 41 մ: Հողամասի մակերեսը 7344 քմ է, որից շենքի կառուցապատման մակերեսը՝ 15.21 % /1117.1քմ/ է, անջրանցիկ մակերեսը՝ 11.22 % /824,0/, գոյություն ունեցող շենքերի մակերեսների գումարը՝ 13.43 % /986,6/ է, ընդհանուր կառուցապատման մակերեսը ստացվում ՝ 39,86% /2927,7/քմ կանաչապատման մակերեսը՝ 4416.3քմ 60.14%, կառուցապատման խտության գործակիցը՝ 0.28: Ստորգետնյա ավտոկայանատեղիների մակերեսը ընդհանուր ՝ 3385,4քմ է, հասարակական հարկերի մակերեսը՝ 4833,7 քմ է, հյուրանոցային հարկերի մակերեսը՝ 5356.1քմ: Բնակելի հարկերում նախատեսվում են 35.7 քմ-ից 104.0քմ , թվով 6-11 բնակարաններ: Հյուրանոցային հարկի բարձրությունը հատակից հատակ նախատեսվում է՝ 3.30 մետր: Ջեռուցման և հովացման համագարգերը նախատեսված են կենտրոնացված: Շենքի կառուցման համար ընտրված է միաձույլ երկաթբետոնե շրջանակակապային կոնստրուկտիվ համակարգ: Հիմնական օգտագործված նյութերն

են ապակի, կերամիկա, բազալտ: Շենքում նախատեսվում է շանթարգելման համակարգ: Կառույցի շրջակայքում նախատեսվում է կանաչապատ բարեկարգված տարածքներ: Վ. Հարությունյան փողոցի կողմից նախատեսվում է իրականացնել 13 վերգետնյա ավտոկայանատեղի, ինչպես նաև ավտոմեքենաների արագընթացման ճանապարհ: Շինարարական հրապարակի կազմակերպման նախագծում բացառվելու են պետական և համայնքային սեփականություն հանդիսացող տարածքների օգտագործումը: Նախագիծը համապատասխանում է ՀՀ օրենսդրության և նորմատիվ տեխնիկական փաստաթղթային պահանջներին: -8.10 նիշում առկա է երկակի նշանակությամբ ավտոկայանատեղի, որը անհրաժեշտության դեպքում կարող է ծառայել որպես պարզագույն թաքստոց 350-400 հոգու համար: Այս հարկում նախատեսվում է մեկ սանհանգույց սահմանափակ կարողությամբ մարդկանց համար և մեկ սանհանգույց ապաստարանից օգտվողների համար: Նշված տարածքը ապահովված է օդափոխությամբ և վթարային լուսավորությամբ:

Կաթսայատունը գտնվում է 26,700 նիշով տանիքի հարկում : Նախատեսվում է տեղադրել 3 հատ կաթսա `rendamax R3403:Յուրաքանչյուր կաթսայի հզորությունը 900 ԿՎատ:

Ենթակայան համալիրում -8,100 նիշով ստորգետնյա ավտոկայանատեղիում նախատեսված է ենթակայան 61,9 քմ չափով:

Լողավազանը իր ձևով հավասարակողմ չէ, լողավազանի երկարությունը մեկ կողմից մոտ 25 մ է,իսկ լայնությունը հասնում է մոտ 11 մ: Լողավազանի ծավալը 291,6իսմ է: Նախատեսվում է ջրի ուլտրամանուշակագույն ախտահանում: Ջրի կորուստները պարբերաբար կլրասնուցվեն:

Ճանապարհ Նախատեսվող համալիրի հետնամասում գոյություն ունի գրունտային ճանապարհ, որը նախատեսվում է ասֆալտապատել և ապահովել մեքենաների և մարդկանց մոտեցումը դեպի համալիրի երկրորդ մուտք: Ճանապարհի լայնությունը հասնում է 3 մ: **Ճանապարհին կից նախատեսվել է նաև քայլուղի: Վ. Հարությունյանի փողոցի կողմից նախատեսվել է արագընթացման ուղի ,որի լայնությունը հասնում է մոտ 6 մ:**

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ` նախատեսվել են թեքահարթակներ, ինչպես նաև շենքերի և կառուցվածքների ներսում (հորիզոնական և ուղղաձիգ հաղորդակցուղիներ) տեղաշարժվելու համար օգտագործվող հետիոտնային ուղի: Սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումները նախատեսվել են քաղաքաշինության նախարարի 2006թ. հոկտեմբերի 10-ի N 253-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներ

- Տարածքի ընդհանուր մակերեսը – 7344.12 քմ,
- Շենքի կառուցապատման մակերեսը` - 1117.1 քմ-15.21 %;
- Ճանապարհ, մայթ և այլ - 824 քմ 11.22 %;

Գոյություն ունեցող և կառուցապատման փուլում գտնվող շենքերի մակերեսների գումարը՝ 986,6 քմ-13.43%(որից կառուցապատման փուլում 641,57 քմ);

Կանաչապատման մակերես – 4416.3 60,17%;

Ստորգետնյա ավտոկայանատեղիների մակերեսը ընդհանուր՝ 3385,4քմ է,

Ավտոկայանատեղերի քանակը՝ ստորգետնյա 57 հատ և վերգետնյա՝ 13 հատ:

- Հողամասի նպատակային նշանակությունը՝ հատուկ պահպանվող տարածքների,
- գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հանգստի համար նախատեսված;
- գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Տարածքում կիրականացվի սիզամարզի ցանքս կտկվեն ծառեր և թփեր:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն:

Նախագծվող բնակելի-հասարակական համալիրի պահանջվող սանիտարա-հիգիենիկ պայմանները ապահովելու համար նախագծով նախատեսված է օդափոխության բնական-մեխանիկական համակցված և ամբողջությամբ մեխանիկական դրդմամբ համակարգեր: Բնական- մեխանիկական համակցված համակարգը նախատեսվում է հարկերում իսկ մեխանիկականը՝ հասարակականում և ավտոկայանատեղիներում: Համակարգերի ընտրությունը կատարվել է տեխնիկատնտեսական վերլուծության հիման վրա, համաձայնեցնելով պատվիրատույի հետ:

Համալիրի հարկերում օդափոխության համակարգը կոմբինացված է՝ բնական-մեխանիկական տեսակի է: Օդային հոսքերը կազմակերպված են այնպես, որ համեմատաբար ախտոտված օդը արտաձվում է սանհանգույցներից և խոհանոցներում նախատեսվող արտածման հովհանոցներից, իսկ թարմ օդը ճնշման տարբերությունների շնորհիվ ներթափանցում է սենյակներ պատուհանների անկիպությունների և հորաններում:

Էներգախնայողության և Էներգաարդյունավետության հետ կապված միջոցառումներ


Համալիրի էներգաարդյունավետությունը նախատեսվում է համապատասխանեցնել ՀՀ կառավարության 12.04.2018թ. N426-Ն որոշմամբ սահմանված չափորոշիչներին, ինչի ուղղությամբ իրականացվելու են համալիր միջոցառումներ, որոնց թվում են երեսպատման համակարգը, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհաններ և վիտրաժներ, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացում:

Ջերմության խնայողության համար ընտրված են ջերմաօգտհանիչներով օդի ներածման համակարգեր, որոնք ապահովում են ջերմության բարձր խնայողություն:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

-8.10 նիշում առկա է երկակի նշանակությամբ ավտոկայանատեղի, որը անհրաժեշտության դեպքում կարող է ծառայել որպես պարզագույն թաքստոց 350-400 հոգու համար: Այս հարկում նախատեսվում է մեկ սանհանգույց սահմանափակ կարողությամբ մարդկանց համար և մեկ սանհանգույց ապաստարանից օգտվողների համար: Նշված տարածքը ապահովված է օդափոխությամբ և վթարային լուսավորությամբ:

ԻՐԱԿԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ1:700



- ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՇՄԵՆԵՐ**
- ՀԵՏԻՈՏ ԱՑՈՒՄՆԵՐ
 - ԶԱՆՈՒՐԻՒՆԵՐ
 - ԿԱՆԱՆԱԴԱՏ ՏԱՐԱԾՔԵՆԵՐ
 - ԱՍՏՆԱՏՆԴԱՏ ԾԱՆԱԴԱՐԳ
 - ԱԿԵԼԱՅԿԱԾ ԾԱՆԱԴԱՐԳ
 - ՀԱՐԻՎԱՆ ԾԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
 - ԶԱՆՐԱՆ ԵՆՁԱԿԱ ԾԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
 - ՎԵՐԳԵՏՏԱ ԱՎՏՈՎԱԾԱՏՆԵՐԻ
 - ՀՈՒՐ ՍԱՐՆԱՏԱԳԻԾ
 - ԿԱՐԱՐԻ ԳԻԾ
 - ՍՈՒՏԵ ԴԵՐԻ ԳՅՈՒՐԱՆՈՅԱԾԻ ՏԱՐԱԾՔ
 - ՍՈՒՏԵ ԴԵՐԻ ԱՎՏՈՎԱԾԱՏՆԵՐԻ
 - ՍՈՒՏԵ ԴԵՐԻ ՀԱՍՏՐԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՔ
 - ԿՑՐԿԱԾՔԻ ԳԻԾ
 - ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՒ ՊԱՐՄԻՐԻ ԳԻԾ
 - ԱՏՐՈՒԹՅԱՆ ԴԱՐԿԻ ԿԵՏԱԳԻԾ

ՀԱՏԱՁԱՅՆՏԵՑԿԱԾ Է ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՏԱՅՆՔԻ ԴԵԿԱԿԱՐ

Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՊԱՏԿԻՐԱՏՈՒ
Հ. ՍԱՀԱԿՅԱՆ

ԳՅՈՒՐԱՆՈՅԱԾԻ,
ՍՊՈՐՏԻ, ՀԱՆՂԱՏԻ ԵՎ
ԺԱՄԱՆՅԻ ՀԱՏԱԿԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ,
ՄԱՐԶ ԿՈՏԱՅԶ,
ՀԱՄԱՅՆՔ ԾԱՂԿԱԶՈՐ
Ք. Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՓՈՂՈՑ 15

ՆԱՄԱԳԾՈՒ

ARSTYLE
«ԱՐՄԵՅԱՆ» ՍՊԸ

ԵՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳԾԱԳԻՒ ԱՆՎԱՏՈՒՄԸ

ԻՐԱԿԻՃԱԿԱՅԻՆ
ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ1:700

ՆԱՄԱԾՅԱԻՆ ԺՈՒ ԱՆ

ԳԾԱԳՐԻ ՀԱՄԱՐԸ	ԽԵՐԻՑ 8
Ճ Ն	ՁԵՐԻՑԻ 41
ՆՁԱ ԱՆՎԱԳՅԱՆ	
ՏՆՈՐԵՆ	ՄՈՒՐԱՎՈՐԻ ԳՐԱԿԻՑԸ
ԾԱՐՏՆ. ԱՐՄԵՅԱՆ,	

AKTIB

Շինարարական մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույց

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՍՆԻՊ 1.04.03-85* մաս II, հետև հիման վրա հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը: Օբյեկտի ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 31,0 ամիս շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից:

1.3.2 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շինմոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Բոլոր տիպի շինմոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից:

Շինհրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից տրված հրահանգներով:

Շինհրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ զերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

Հետիոտների անվտանգությունը ապահովելու նպատակով շինհրապարակը անհրաժեշտ է ցանկապատել թիթեղով:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

1.3.3 Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ

Շինարարությունը ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով: Գլխավոր կապալառու կազմակերպությունը որոշվելու է մրցույթով:

Մասնաշենքերի միացումը արտաքին ինժեներական ցանցերին կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շենքերի, ավտոճանապարհների, հրապարակների և մայթերի կառուցումը կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունը կարելի է իրականացնել ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վարձակալել դրանք այլ կազմակերպություններից:

Ժամանակավոր շինությունների, վերամբարձ կռունկի, պահեստավորման մակերեսների տեղակայումը պատկերված է շինարարական գլխավոր հատակագծի վրա:

Առաջարկվում է հնարավորինս օգտագործել գույքային շարժական շինություններ:

Ժամանակավոր շինությունների ցանկը և դրանց տեղակայումը ցանկալի է լրացուցիչ ճշտվեն տեղում և համաձայնեցվեն պատվիրատուի հետ:

1.3.4 Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը կառաքվեն Ծաղկաձոր քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

Առաջարկվում է շինարարության նյութատեխնիկական մատակարարման հետևյալ սխեման.

- Առանձին ամրանային ձողերը և հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով բերվում են անմիջականորեն շինարարական հրապարակ, որտեղ կատարվում է դրանց պահեստավորում և տեղադրում,
- Բետոնային խառնուրդը միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար առաքվում են անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով,
- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումը իրականացվելու է շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում: Տարածքում քայուղեր և վառելանյութ չի պահեստավորվելու:

Շինարարությունը կիրականացվի մասնագիտացված կազմակերպության կողմից :

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. Աշխատանքների բնույթից ելնելով՝ բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:
2. Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի՝ «կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:
3. Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների՝ «աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ) համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան
2. Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:
3. Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի՝ «արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:
4. Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման՝ հրահանգման ժամանակին և որակով անցկացման՝ անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման՝ արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

1.3.5 Կադրային ապահովում և շինտեխնիկա

Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ 34 մարդ, որից

Ինժիներատեխնիկական անձնակազմ - 4 մարդ

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է ստորև:

Աշխատանքների կատարման համար ներկայացվում են հետևյալ հիմնական տեխնիկական միջոցները՝

Աղյուսակ 1		Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ		
NN	Անվանում	Մակնիշ	Քանակ	
1	Էքսկավատոր	KOMATSU PC 400-7	2	
2	Բուլդոզեր	KOMATSU D37-EX-22	1	
3	Շարժական կոմպրեսոր	ЗИФ-55В	1	
4	վերամբարձ ավտոկռունկ	Галичанин КС-65713-1	1	
5	Աշտարակային կռունկ	Liebherr 132 EC - H8	1	
6	Տոփանիչ	CR 3/60	2	
7	Գույքային կաղապարամած	կոմպլ.	1	
8	Թրթրիչ մակերեսային էլեկտրական	ИБ-91А	1	
9	Թրթրիչ խորքային էլեկտրական	ИБ-102А	2	
10	Փոխարկիչ թրթրիչների համար	ИБ-4	3	
11	Եռակցման տրանսֆորմատոր	СТН-500	2	
12	Դակիչ ձեռքի էլեկտրական	ИЭ-4709А	3	
13	Ձեռքի էլեկտրական դուր	ИЭ-1208Э	3	
14	Հղկող մեքենա	ИЭ-2201	3	
15	Թրթրագլղոն	НАМИ 3410	1	
16	Ավտոբետոնախառնիչ	СВ-69Б	հաշվարկով	
17	Ավտոբետոնատար	КрА3-65055	հաշվարկով	
18	Ինքնաթափ ավտոմոբիլ	МА3-5550	հաշվարկով	

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը կիրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ մասնագիտացված սպասարկման կետերում:

Շինհրապարակում կայանվող մեքենաների լիցքավորումը կիրականացվի հատուկ տեխնիկական միջոցների կիրառմամբ՝ բացառելով հնարավոր արտահոսքերը:

Համաձայն ճարտարապետահատակագծային առաջադրանքի 9.7 կետի պահանջի շինարարության կազմակերպման նախագծով բացառվել է պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի օգտագործումը:

1.3.6 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ եւ այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ եւ կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր եւ այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի եւ ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաեւ շինարարական անձնակազմի խմելու եւ կենցաղային նպատակների համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, կենցաղային աղբն է ամսեկան մեկ մարդու հաշվարկով 7 կգ $31 \times 7 \times 34 / 1000 = 7.4$ տ եւ շինարարական աղբն է 480 խմ ծավալով (այդ թվում քանդումից առաջացող): Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից:

- a) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{խ.տ.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 4 մարդ

N – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n_1 – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 30 մարդ

N_1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 խմ.օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 1800 օր

$$W_{\text{խ.տ.}} = (4 \times 0.016 + 30 \times 0.025) \times 1800 = 1465 \text{ խմ/շին. ժամ.}:$$

b) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T \times D, \text{ որտեղ՝}$$

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 3000 քմ,

K_1 – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 խմ,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 1200

D – ջրցանման քանակը օրվա ընթացքում – 2;

$$U_1 = 3000 \times 0.0015 \times 1200 \times 2 = 10800 \text{ խմ/շին. ժամ.}:$$

c) Անիվների լվացման ջրապահանջ

Անիվների լվացման և ջրալցման ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_2 = S_2 \times K_2 \times T, \text{ որտեղ՝}$$

S_2 – լվացվող ավտոմեքենաների քանակը, 15 հատ,

K_2 – միավոր ծախսը 1 ավտոմեքենայի համար, 0.14 խմ,

T – ժամանակահատվածը օրերով, 1800

$$U_2 = 15 \times 0.14 \times 1800 = 3780 \text{ խմ/շին. ժամ}$$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 16045 խմ/շին. ժամ:

Համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի, որի ստացման համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը ներկայացվել է մատակարար կազմակերպություն:

Շինարարության փուլում ջրցանման համար անհրաժեշտ ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով կամ շինարարության թույլտվության ստացումից հետո համապատասխան փաստաթղթերի փաթեթը կներկայացվի լիազոր մարմին ջրցանման նպատակով ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ(բիոզուգարանի աշխատանքը հիմնված է բիոլոգիական ակտիվ հեղուկի ազդեցությամբ, որը քայքայում է թափոնները, վերացնում է միկրոբներին և չեզոքացնում հոտերը: Բիոզուգարանները հատակը անջրանցիկ է: Բիոզուգարանները պայմանագրային հիմունքներով սպասարկվում են այն ընկերության կողմից, որը մատակարարել է բիոզուգարանները), խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն գորող պայմանագրի:

Համալիրում նախատեսվում է իրականացնել անհատական օդափոխման և ջեռուցման համակարգ որոնց արտաքին բլոկները նախատեսվում է քողարկել հատուկ դրանց համար նախատեսված խորշերում և համապատասխան ձայնամեկուսիչ նյութերի օգտակործմամբ նախատեսվում է ապահովել աղմուկի ցածր մակարդակ:

2.ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՐ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ

2.1 ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հետազոտվող տարածքը գտնվում է Ծաղկաձոր համայնքի Վ. Հարությունյան փողոցում և իրենից ներկայացնում է կառուցապատված տարածք: Տարածքում առկա է մեկ հարկանի տնակներ 211,2 քմ մակերեսով 4 հատ, տնակ – 79,43 քմ մակերեսով մեկ հատ, տնակ – 52,39 քմ մակերեսով երկու հատ, տնակ – 83,81 քմ մակերեսով մեկ հատ, տնակ – 79,43 քմ մակերեսով մեկ հատ, տնակ – 90,64 քմ մակերեսով մեկ հատ, հանգստյան տուն 294,55քմ, Շոգեբաղնիք 118,75 քմ: Գոյություն ունեցող շինություններից քանդման ենթակա է մեկ հարկանի 07-005-0026-0795-002, 07-005-0026-0795-003 ծածկագրերով 211,2 քմ մակերեսով 2 հատ տնակ և 07-005-0026-0795-007 ծածկագրով 83.81քմ մակերեսով մեկ տնակ: Սեփականության վկայականով առկա մնացած շինությունները մնում են առանց փոփոխությունների: Ներկայումս տարածքում ստացված քաղաքաշինական փաստաթղթերի հիմքով կազմակերպված է շինհրապարակ, իրականացվում է կառուցապատման աշխատանքեր: Տարածքի երկու կողմից առկա է հասարակական և հանգստի շինություններով ծանրաբեռնված հողամասեր: Շինությունները գտնվում են 15մ և ավել հեռավորության վրա

Գեոմորֆոլոգիական տեսակետից Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը գտնվում է Ծաղկունյաց լեռների հարավ-արևելյան լեռնաձյուղավորություններից մեկում:

Տարածքում իրականացված երկրաբանահետախուզական աշխատանքների համաձայն

Շերտ 1 - Թափվածքային գրունտներ: Շերտի հորատված առավելագույն հզորությունը 1,0 մետր է: Շերտը համատարած է:

Շերտ 2 - Ավազակավեր, շականակագույն, խճի, մանրախճի հետ, խոնավ, կոշտ կոնսիստենցիա: Շերտի հորատված առավելագույն հզորությունը 2,6 մետր է: Շերտը համատարած չէ:

Շերտ 3 - Խիճ, մանրախիճ, խոշոր մեծաքարեր, ավազակավային լցոնով 30 40%, ստորգետնյա ջրերի մակարդակից ներքև ջրահագեցված, շերտի բացված հզորությունը տատանվում է 7,0-ից 22,0 մետր:Շերտը համատարած է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Որպես հուսալի հիմնատակ առաջարկվում է, խիճ, մանրախիճ, խոշոր մեծաքարեր, ավազակավային լցոնով 30-40% (շերտ-3): Գրունտը անհամասեռ է ինչպես հատիկաչափական կազմով, այնպես էլ ֆիզիկական հատկություններով: Գրունտների

Ֆիզիկամեխանիկական բնութագրերի հաշվարկային արժեքները բերվում են աղյուսակ 4-ում՝ ըստ լաբորատոր հետազոտությունների տվյալների:

2. Քանի, որ ունենք խիստ անհամասեռ հիմնատակի գրունտներ, ներկայացված խիճ, մանրախիճ, մեծաքարեր (շերտ-3), առանձին տեղերում հանդիպում են խոշոր մեծաքարեր, չափերը հասնում են 1,0-3,0մետր, առաջարկվում է կիրառել երկաթբետոնյա սալ:

3. Շինության ստորգետնյա մասերը հնարավոր մակերևույթային ջրային հոսքից պաշտպանելու նպատակով նպատակահարմար է իրականացնել ստորգետնյա մասերի ջրամեկուսացում և ցամաքուրդային ցանցի տեղադրմամբ ստորգետնյա ջրերի մակարդակի իջեցում ,մասնավորապես հորատանցք 1-ի հատվածում ջրի տեղադրման խորությունը 3,0մետր է:

4. ՀՀՇՆ 2020 սեյսմիկ նորմերի համաձայն Ծաղկաձոր քաղաքը գտնվում է գտնվում է քաղաքի տարածքը գտնվում է սեյսմիկ երկրորդ գոտում, որտեղ սպասվող առավելագույն սեյսմիկ արագացումները կազմում են $a_{max}=0,4g$, տեղամասի գրունտային պայմաններն ըստ սեյսմիկ հատկությունների գնահատվում է որպես երկրորդ կարգ, գործակիցը կազմում է $k_s=1,0$:

Հիդրոերկրաբանական տեսակետից գրունտային ջրերը գտնվում են 3,0-28,0մետր խորությունների վրա: Շինարարական տեղամասի հիդրոերկրաբանական պայմանները հիմնականում բարենպաստ են շինարարության համար:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարսոք, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում նախագծվող կառույցի վրա՝ բացակայում են:

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼՏՆՏԵՍԿԱՆ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ծաղկաձոր համայնքի վարչական տարածքը կազմում է 4կմ²: Ծաղկաձոր համայնքի բնակչությունը է 1589 մարդ: Քաղաքը տեղակայված է Ծաղկունյաց լեռնաշղթայի հյուսիս-արևելյան ճյուղավորման Թեղենիս լեռան (2846մ) արևելյան լանջին և ընդգրկում է Տանձաղբյուր գետի ավազանը (ծովի մակերևույթից 1830-2000մ բարձրության վրա): Ռելիեֆը բարդ է,:

Երևանի հետ կապված է բարեկարգ ասֆալտապատ մայրուղով: Ռեսուրսների հիմնական տեսակներն են ռեկրեացիոն և պատմամշակութային ռեսուրսները, անտառային ֆոնդի հողերը:

Համայնքում գերիշխող են հանգստի կազմակերպման, սպորտի, տուրիզմի, առողջարարական և սպասարկման ծառայությունները: Ծնորհիվ կազդուրիչ անտառների և բուժիչ կլիմայի, գեղատեսիլ բնապատկերների և լեռնագրական պայմանների առանձնահատկությունների, Ծաղկաձորը համարվում է հանրապետության ամբողջ տարի

գործող կարևորագույն հանգստավայրերից մեկը և, ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 1-ի N95-Ս որոշմամբ այն հայտարարված է որպես Զբոսաշրջային կենտրոն:

2.2 ԲՆԱՎԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ծաղկաձորը գտնվում է Բարձրադիր լեռնային գոտում: Ձմռանը կլիման նույնպես է: Գտնվելով չոր մերձարևադարձային գոտում՝ տարածքի կլիման բնութագրվում է որպես բարձրլեռնային հատուկ՝ չափավոր տաք, համեմատաբար խոնավ ամառով և չափավոր ցուրտ, անհողմ, ձյունառատ ձմեռով: Տեղումների տարեկան քանակը 689 մմ է:

Օդը մշտապես չոր է, այդ պատճառով ցրտերը այնպես էլ ուժեղ չեն զգացվում: Տարեկան միջին ջերմաստիճանը +5.6, բացարձակ նվազագույնը -31.5, իսկ առավելագույնը +35: Տարածքում գերակշռում են արևմտյան քամիները:

Օդի հարաբերական տարեկան միջին խոնավությունը 72:

Շրջանի օդերևութաբանական պարամետրերը ըստ «Հրագրանի» օդերևութաբանական կայանի տվյալների բերված է ստորև աղյուսակներում «Շինարարական կլիմայաբանություն ՀՀՇՆ 22-01-2024» տվյալների համաձայն:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ 3.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը

Օդերև-ութաբ. կայանը	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելա-գույն
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Հրազդան	-7.8	-6.1	-1.5	5.2	10.3	14.1	17.4	17.4	13.7	7.6	1.3	-4.8	5.6	-31.5	35.0

Աղյուսակ 3.2. Օդի հարաբերական խոնավությունը

Օդերև-ութաբ. կայանը	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
														Միջին ամսական	Միջին ամսական ժ. 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական ժ. 15-ին
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12					
Հրազդան	79	77	74	71	70	70	68	65	66	70	76	79	72	79	69	68	52

Աղյուսակ 3.3. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ	
	Ըստ ամիսների														Տարեկան
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Հրազդան	46	55	66	88	100	66	45	30	33	61	52	47	689	266	423
	40	47	45	52	52	42	50	42	49	64	49	34	64		

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ 3.4. Քամու պարամետրերը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Ամիսներ	Կրկնելիություն, % /միջին արագություն, մ/վրկ ըստ ուղղությունների								Անդրրի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող արագությունը հունիս-օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հունիսին, մ/վ	Գերակշռող արագությունը դեկտեմբեր-փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Հյուսիսային (Հս)	Հյուսիսարևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավարևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավարևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիսարևմտյան (ՀսԱրմ)						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Հրազդան	Հունվար	2	5	11	4	19	39	18	2	27	1.9	Արլ	2.9	Արմ	2.4
		2.3	2.4	2.0	1.4	1.9	2.3	2.4	1.7						
	Ապրիլ	4	14	19	6	13	21	20	3	15	2.1				
		2.3	2.7	2.2	1.8	1.9	2.3	2.4	2.0						
	Հուլիս	8	45	35	2	2	3	4	1	7	2.8				
		3.5	3.2	2.9	1.9	2.0	1.9	2.4	2.2						
	Հոկտեմբեր	3	12	23	6	11	20	22	3	26	1.7				
		2.0	2.2	2.0	1.7	1.8	2.1	2.2	2.0						

2.3 Օդային ավազան


Մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ ՇՄՆ «Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից:

Ծաղկաձոր քաղաքում աղտոտող նյութերի միջին հնգամյա կոնցենտրացիաները՝ ազոտի երկօքսիդ 0.009 մգ/լսմ, ծծմբի երկօքսիդ 0.008 մգ/լսմ, փոշի 0.054 մգ/լսմ:


Ծաղկաձոր

Ծաղկաձոր քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 14 դիտակետ և 1 դիտակայան: 2022 թվականին Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում որոշված միացությունների միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:


Նախորդ տարվա համեմատությամբ 23%-ով աճել է փոշու, 19%-ով՝ ազոտի երկօքսիդի, 3%-ով՝ ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիաները:




Գծապատկեր 43. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխությունը 2021-2022 թթ.



Գծապատկեր 44. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխությունը 2021-2022 թթ.



Գծապատկեր 45. Մաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխությունը 2021-2022 թթ.



Գծապատկեր 46. Մաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում աղտոտիչների միջին տարեկան կոնցենտրացիայի փոփոխությունը և անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումները

2.4 Ջրային ռեսուրսներ

«Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշմամբ ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

ՀՀ տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 6 գետավազանային կառավարման տարածքների միջոցով:

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես պարբերական մոնիթորինգի է ենթարկվում ՀՀ շրջակա միջավայրի նախարարության

«Հիդրոտերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, որի տվյալները (վերջին տարեկան տեղեկանք) ամփոփ տեղեկանքից բերված են ստորև:

Հրագրանի ջրավազանային կառավարման տարածք

Նախատեսվող գործունեության իրականացման տարածքը տեղակայված է Հրագրանի ջրավազանային կառավարման տարածքում:

Համայնքի սահմանում հոսում է լեռնային Ծաղկաձոր (Տանձաղբյուր) գետակը, որը գետաբերանի մոտ առաջացնում է լայնատարած գետահովիտ և թափվում Մարմարիկ գետը:

Ստորև ներկայացվում է Ծաղկաձոր (Տանձաղբյուր) գետի որակի մոնիթորինգի տվյալները, ըստ ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոտերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կայքէջում ներկայացված 2022թ տեղեկագրի տեղեկատվության:

Ծաղկաձոր գետի ջրի որակը Ծաղկաձոր քաղաքից վերև գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով, Ծաղկաձոր քաղաքից ներքև՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված՝ ամոնիում իոնով և մանգանով:

Նախատեսվող գործունեությունը ջրային ավազանի աղտոտվածությունը չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր ազդեցությունների նվազեցմանն ուղղված:

2.5 Հողերի նկարագիրը

Հողերը

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- ❖ Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- ❖ Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- ❖ Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

2.6 Հիմնային աշխատանքներ

Նախատեսվող գործունեության նախագիծը ենթադրում է նաև հիմքերի փորման աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 39374 խմ ընդհանուր ծավալով փորման աշխատանքեր հանվող 25696 խմ ծավալով զանգվածը կտեղափոխվի Ծաղկաձորի քաղաքապետարանի կողմից տրամադրվող շինարարության թույլտվությամբ տրամադրված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կապահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

2.7 Կենսաբազմազանությունը

Քաղաքին հարակից են Հրազդանի անտառտնտեսության Ծաղկաձորի անտառպետության անտառային էկոհամակարգերը՝ չափավոր չորային կաղնուտաբոխուտային լայնատերև խառը անտառներով ու հետանտառային նոսրաստաններով, որտեղ գերակշռող ծառատեսակը Կաղնի խոշորատեղծն է (*Quercus macranthera*): Քաղաքի շրջակա անտառներում աճում են նաև բոխի, հացենի, թխկի, լորենի, սոճի, թեղի, ալոճենի, մասրենի, հաղարջենի, ազնվամորի և այլ ծառաթփային բուսատեսակներ: Քաղաքին հարակից անտառներում հանդիպում են նաև վայրի տանձենու (*Pyrus sp.*, *P. georgica*, *P. communis*) և խնձորենու (*Malus silvestres*) զգալի գերակշռությամբ անտառային որոշ հատվածներ:

Բուն քաղաքն իրենից ներկայացնում է հետանտառային տափաստանացված լանդշաֆտ, որի անմշակ տարածքները ներկայացնում են տարախոտահացազգային, նեղատերև փետրախոտով, ցորնուկներով, թիթեռնածաղկավորների տարախոտով, հացազգիներով և բոշխերով պատված բուսական համակեցություններով:

2.8 Բուսական աշխարհ

Ծաղկաձորի գետավազանի բուսական ծածկույթն ունի որոշակի բարձրունքագոտիական տարբերակում: Այստեղ կարելի է հանդիպել տափաստանային, նոսրանտառային, անտառային և մարգագետնային բուսականության տիպերը, դրանց բազմաթիվ ենթատիպերն ու անտրոպոգեն տարբերակները:

Ներկայացվող տարածքը գտնվում է Ծաղկաձորի գետավազանի 1740-1800մ բարձրությունների սահմաններում՝ միջին լեռնային գոտու չափավոր խոնավ, տափաստանացված անտառմարգագետնային գոտում:

Այստեղ կերհանդակներն ունեն երկրորդական ծագում, առաջացել են ոչնչացված անտառների տեղերում՝ բացատներում: Հանդիպում են ինչպես տափաստանային, այնպես էլ մարգագետնային բուսական տիպեր, որոնք հիմնականում օգտագործվում են որպես խոտհարքներ: Կերհանդակների բերքատվությունը և կերային արժեքը բարձր են: Օգտագործվում են որպես գարնան-աշնան արոտավայրեր:

Ծաղկաձորի գետավազանը իրենից ներկայացնում է որոշակիորեն փակ ավազան և քանի որ, այստեղ առկա են հանքային ջրերի ռեսուրսներ, այս հատվածի անտառները համեմատաբար խոնավ են և ավելի պահպանված՝ քան գետավազանի այլ տարածքներում:

Ծաղկաձոր քաղաքի բուսականությունը իրենից ներկայացնում է հացազգիների գերակշռությամբ լեռնատափաստանային տարախոտեր /Ոգնախոտ Վորոնովի (*Dactylis Woronovii*), Սեզ տափաստանային (*Phleum phleoides*), Դաշտավուկ սոխուկավոր (*Poa bulbosa*) Կելերիա սանրաձև (*Koeleria cristata*) Յորնուկ ցցամազ (*Bromus squarrosus*), Շյուղախոտ ակոսավոր (*Festuca sulcata*) և այլն/, մասամբ մերձալպյան բարձրախոտերի /իշառվույտ նեապոլիտական (*Melilotus neapolitanus*), Եղինջ երկտուն (*Urtica dioica*), Ծվծվուկ կտրտված (*Silene multifida*) և այլն/ մասնակցությամբ: Հողաբուսաշերտի հաստությունը 20-30 սմ է: Նշված տափաստանացված տարածքում առանձնանում են սոճու (*Pinus hamata*), վայրի տանձենու (*Pyrus communis*) և ինձորենու (*Malus silvestres*), կաղնու (*Quercus macranthera*) տարբեր հասակի ծառեր և, տեղ-տեղ նաև մասրենու (*Roza*) ու ալոճենու (*Crataegus*) թփեր:

Բույսերի վեգետացիան սկսում է մայիսի սկզբներին: Այստեղ միամյա բույսեր շատ քիչ են հանդիպում, հիմնականում բազմամյա բույսեր են և առանձնանում են շատ արագ վեգետացիոն ժամանակահատվածով՝ հասցնելով ծաղկել ու պտուղ տալ շատ կարճ ժամկետներում: Մայիսի առաջին տասնօրյակին, տերևների և ցողունների կանաչ ֆոնի վրա առանձնանում են Պապլոր հայկականը (*Muscari armeniacum*) և Գնարբուկ գարնանայինը (*Primula veris*): Սոխուկավոր բույսերից հետո այս գոտին պատվում է *Ranunculus-Շ*, *Myosotis-Շ*, *Veronica-Շ* ծաղիկների խայտաբղետ գույներով:

Ամռան կեսին ծաղկում են դաշտավուկները, բոշխերը, ինչպես նաև *Gentiana*, *Campanula*, *Carum*, *Taraxacum* և այլ թիթեռնածաղկավորներ, բարդածաղկավորներ և խաչածաղկավորներ:

Ծաղկաձոր քաղաքի բնակավայրի տարածքում տեղ-տեղ աչքի են ընկնում խիստ նոսր դասավորվածությամբ միայնակ, կամ խմբերով, կամ մացառուտների վերածված խոշորառեջ կաղնու (*Quercus macranthera*) ծառերը, որոնք մեծամասամբ հատված են և բնաշվային աճի

շնորհիվ վերականգնված: Առկա են նաև կորաբուն կեչի Լիտվինովի (*Betula litvinovii*) վեցաբուն մեկ ծառ և տեղ-տեղ աճող մաարենու (*Rosa canina*) ու սովորական կամ մահացու դափնյակի (*Daphne mezereum*) թփեր:

Մարզի տարածքում հանդիպող և անհետացման եզրին գտնվող բուսատեսակների վերաբերյալ տեղեկատվությունը վերցված է ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N72-Ն որոշմամբ հաստատված ՀՀ բույսերի Կարմիր գրքից: ՀՀ Կոտայքի մարզում աճում են 54 տեսակի բույսեր, որոք գրանցված են ՀՀ բույսերի Կարմիր գրքում: Տարածքին բնորոշ, ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակները բերված են աղյուսակում:

Հ/հ	Բուսատեսակների անվանումը		Պահպանության կարգավիճակ
	Լատիներեն	Հայերեն	
1	<i>Opopanax persicus</i>	Ճավշիր պարսկական	CR
2	<i>Sedum stoloniferum</i> Gmel.	Թանթանիկ ընձուղակիր	VU
3	<i>Ophioglossum vulgatum</i> L.	Իժպլեզու սովորական	CR
4	<i>Najas minor</i> L.	Ջրահարս փոքր	VU
5	<i>Puccinellia grossheimiana</i>	Անողնուցուկ Գրոսհեյմի	EN
FUNGI – ՄՆԿԵՐ			
1	<i>Amanita muscaria</i> (L.) Pers	Ճանճասպան կարմիր	VU
2	<i>Boletus edulis</i> Bull	Սպիտակ սունկ, թնջուկ	VU
3	<i>Mutinus caninus</i>	Մուտինուս շնային	EN
4	<i>Ithyphallus ravenelii</i>	Մուտինուս Ռավենելի	DD
5	<i>Ithyphallus impudicus</i>	Թիակիկ սովորական, մորկեղ գարշահոտ	EN
6	<i>Strobilomyces floccopus</i>	Կոնասունկ փաթիլառտիկ	VU

Տարածքը երկար տարիներ ենթարկվել է անտրոպոգեն ազդեցությունների: Բուն տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ կամ կենդանատեսակներ չկան:

2.9 Կենդանական աշխարհ

Ծաղկաձոր համայնքի և դրա շրջակայքի համար դիտարկվում են միայն ողնաշարավոր կենդանիները, քանի որ Գլխավոր հատակագծով նախատեսված աշխատանքները էական ոչ մի ազդեցություն չեն ունենա անողնաշարավոր կենդանիների վրա: Նկարագրվող տարածքում տարածված են միջին բարձրության (մինչև 1700 մ ծովի մակերևույթից բարձր) լեռնային տափաստաններին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ:

Տվյալ տարածքի դոմինանտ և բնորոշ տեսակներից կարելի է նշել Հայաստանում ամենուրեք տարածված *Crocidura* (սպիտակատամիկ), *Vulpes vulpes* L. (աղվես), *Cricetus auratus* Nat. (գերմանամուկ), *Microtus arvalis* Pall. (դաշտամուկ), *Perdix perdix* L. (կաքավ), *Grus grus* L. (կռունկ) և այլն:

Մարդու գործունեության հետ կապված բազմաթիվ պատճառներով (բուսականության վերացում, ռոտզում, ավտոճանապարհների և այլ գծային կառուցվածքների կառուցում, օգտակար հանածոների արդյունահանում և վերամշակում, որսագողություն և այլն), կենդանիների թիվը կրճատվել է և շարունակում է կրճատվել: Կենդանական աշխարհի պահպանության նպատակով դրանց զգալի մասը վերցված է հատուկ պահպանության տակ և գրանցված է Հայաստանի Հանրապետության կարմիր գիրք և Բնության Պահպանության Միջազգային Միության (ԲՊՄՄ) Կարմիր Գրքերում: Ստորև, աղյուսակում բերված են Կարմիր Գրքերում գրանցված կենդանիների տեսակները ըստ պահպանության կարգավիճակի (1–անհետացման վտանգի տակ գտնվող, հազվագյուտ, 2–անհետացող, կրճատվող):

Հ/հ	Կենդանիների անվանումը		Գրանցման Կարմիր գրքի անվանում	
	Լատիներեն	Հայերեն	ՀՀ	ԲՊՄՄ
1	<i>Vormela peregusna</i>	Հարավեռուսական խայտաքիս	2	-
2	<i>Circaetusgo llicus</i> Gmeelin	Եվրոպական օձակեր	1	-
3	<i>Cicaetus gallicus</i>	Օձակեր արծիվ	2	-
4	<i>Lacerta oarva</i> Boulenger	Փոքրասիական մողես	1	-
5	<i>RhinolophusMehelyi</i>	Մեհելիի պայտաքիթ	1	-
6	<i>Barbastella leuuucomelas</i> <i>Gretzschmer</i>	Ասիական լայնականջ չղջիկ	2	-
7	<i>Capra aegagrus erxleben</i>	Բեզդարյան այծ	2	-
8	<i>Trachylepis septemtaeniata</i>	Առաջավորասիական մաբուլյա	1	-
9	<i>Elapha hohenakeri strauch</i>	Անդրկովկասյան սահնօծ	1	-

10	Telescopus fallax iberus eichwaldi	Կովկասյան կատված	1	-
11	Zamenis hohenackeri	Անդրկովկասյան սահնած	1	-
12	Mylabris sedilithorax Sumakov	Թամբակուրծք թարախահան	1	-
13	Cylindronotus erivanus	Երևանյան սևամարմին	1	-
14	Parnassius apollo kashtshenkoi Sheljuzhko	Ապոլոն	1	-
15	Proterebia afra hyrcana	Աֆրիկական փրոթերեբիա	1	-
16	Brenthis ino schmitzi Wagener	Բրենթիս Ինո	1	-
17	(Bombus daghestanicus Radoszkowsky)	Իշամեղու դաղեստանյան	1	-

2.10 Բուսական աշխարհի պահպանության միջոցառումները

Նոր կառուցապատվող տարածքների շինարարական աշխատանքների արդյունքում տեղի կունենա հողի բերրի շերտերի մասնակի վնասում (կառուցման փուլում), հողային զանգվածների փորման, հանման և տեղափոխման հետ կապված փոշու արտանետումներ: Շինարարական տեխնիկայի շահագործման հետևանքով առաջացած այրման արգասիքներ և աղմուկ: Ազդեցությունների նվազեցումը կարելի է ապահովել իրականացնելով մի շարք բնապահպանական միջոցառումներ և կազմակերպելով աշխատանքների մոնիթորինգ:

Հողածածկին պատճառված վնասները նվազագույնին հասցնելու նպատակով նախատեսված է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- կառուցապատումից ազատ տարածքում նախատեսվում է իրականացնել կանաչապատում համաձայն կանաչապատման նախագծի:
- Կանաչապատումը կիրականացվի առաջնորդվելով ՀՀ կառավարության 2018թ փետրվարի 8-ի N 108-Ն որոշման դրույթներով:

Բուսական աշխարհի պահպանության միջոցառումները նախատեսվում է իրականացնել ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներով:

Շինարարական աշխատանքների տարածքում հողի բերրի շերտ չկա:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի մաքրում աղբից, կեղտոտված բնահողից, վառելիքաքսուկային նյութերից: Շինարարական աղբը և մնացած թափոնները տեղափոխվելու են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող շինարարության թույլտվությամբ նշված աղբավայր:

Այդ նպատակով մինչև գործունեության սկսելը համայնքապետին կներկայացվի համապատասխան հայտ, կհամաձայնացվի աղբի և ավելացած գրունտի տեղափոխման վայրերը:

2.11 Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ

Ամենամեծ ազդեցությունը կարտահայտվի հողային աշխատանքների ժամանակ դրանց բների ոչնչացմամբ:

Կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով ամենաինտենսիվ շինարարական աշխատանքները կիրականացվեն ձվադրման և բնադրման ժամանակաշրջանից (ապրիլ-մայիս) դուրս:

Ընդհանուր առմամբ, շինարարական աշխատանքները կկրեն լոկալ և ժամանակավոր բնույթ, ինչի շնորհիվ կենդանիներին հասցվող վնասը կլինի նվազագույն: Շինարարական աշխատանքների բնույթը և մասշտաբը այնպիսին են, որ նրանք իրենց փոքրածավալության պատճառով չեն կարող արգելել կենդանական աշխարհի ներկայացուցիչների սեզոնային միգրացիայի կամ ջուր խմելու ճանապարհները:

2.12 Բնության հուշարձաններ

ՀՀ Կոտայքի մարզի բնության հուշարձանների ցանկը ներկայացվել է համաձայն ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշմանն:

NN ը/կ	Անվանումը (նկարագիրը)	Տեղադիրքը
1	«Անանուն» խզվածքներ	Կոտայքի մարզ, Եղվարդ ավանից հվ, ավազահանքի մոտ
2	Թագավորանիստ խարամային կոնի պեմզաների և խարամների կոնտակտ	Կոտայքի մարզ, Եղվարդ քաղաքից 3.5 կմ դեպի հարավ
3	«Թագավորանիստ» խարամային կոն	Կոտայքի մարզ, Եղվարդ ավանից 3 կմ հվ, Աշտարակ տանող խճուղու ձախ կողմում
4	«Պեռլիտե փիղ» քարե քանդակ	Կոտայքի մարզ, Չարենցավան քաղաքից 2 կմ հվ, քարահանքի մոտ

5	«Անանուն» բյուրեղային թերթաքարերի ու վերին կավճի կրաքարերի կոնտակտ	Կոտայքի մարզ, Բջնի գյուղի արևմտյան ծայրամասում
6	«Ծակ քար» բնական թունել	Կոտայքի մարզ, Բջնի գյուղի մատույցներում, Հրազդան գետի ձախ ափին
7	«Բազալտե երգեհոն» սյունաձև բազալտներ	Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
8	«Անանուն» քարայր սյունաձև բազալտներում	Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1,0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
9	«Անանուն» լանջային երոզիա	Կոտայքի մարզ, Ազատ գետի աջակողմյան ափերին
10	«Անանուն» լավային ծալքեր	Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
11	«Անանուն» խորշեր	Կոտայքի մարզ, Գողթ գյուղից մոտ 3.0 կմ հս-արլ
12	«Հատիս» հրաբուխ	Կոտայքի մարզ, Զովաշեն գյուղից 2.0 կմ արմ
13	«Ավազան» հրաբխային գմբեթ	Կոտայքի մարզ, Կարենիս գյուղից 1.5 կմ հս-արլ
14	«Կարենիս» հրաբխային գմբեթ	Կոտայքի մարզ, Կարենիս գյուղից 0.5 կմ հս-արլ
15	«Անանուն» ապարների բնորոշ մերկացում	Կոտայքի մարզ, Նուռնուս գյուղի և Արգելի ՀԷԿ-ի միջև
16	«Անանուն» օբսիդիանի ելքեր	Կոտայքի մարզ, Ջրաբեր գյուղից մոտ 1.5 կմ հս-արմ, Երևան-Սևան խճուղու աջ կողմում
17	«Անանուն» քարե կուտակումներ	Կոտայքի մարզ, Քաղսի գյուղի հվ-արմ եզրին, Հրազդանի կիրճում
18	«Գութանասար» հրաբուխ	Կոտայքի մարզ, Ֆանտան գյուղից 3 կմ հվ
19	«Լեռնահովիտ» քարային կուտակումներ	Կոտայքի մարզ, Ֆանտան գյուղից 4-5 կմ հվ-արլ, «Թեզխարաբ» գյուղատեղիի մոտ
20	Ձորաղբյուրի (Մանգյուսի) բրածո ֆլորա	Կոտայքի մարզ, գյուղ Ձորաղբյուր
21	«Հաղպրտանք» աղբյուր	Կոտայքի մարզ, Հրազդան քաղաքի Վանատուր (Աթարբեկյան)թաղամասի արլ ծայրամասում, 1.5 կմ հս-

		արմ, ծ.մ-ից 1755 մ բարձրության վրա
22	«Համով» աղբյուր	Կոտայքի մարզ, Ակունք գյուղի հվ-արմ ծայրամասում, եկեղեցու մոտ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա
23	«Քաղցր» աղբյուր	Կոտայքի մարզ, Արզնի գյուղից 150 մ հվ-արմ, Հրազդան գետի ձախ ափին, ծ.մ-ից 1300 մ բարձրության վրա
24	«Ձորի» աղբյուր	Կոտայքի մարզ, Գողթ գյուղից 0.3 կմ հս-արլ, Գողթ գետի աջ ափին, ծ.մ-ից 1580 մ բարձրության վրա
25	«Ավազան» աղբյուր	Կոտայքի մարզ, Կաթնաղբյուր գյուղից 0.3 կմ հս-արլ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա
26	«Սագերի» լիճ	Կոտայքի մարզ, Գեղարդ գյուղից մոտ 4 կմ հս
27	«Վիշապա» լիճ	Կոտայքի մարզ, Գեղարդ գյուղից մոտ 4 կմ արլ
28	«Բազմալիճք» լիճ	Կոտայքի մարզ, Սևաբերդ գյուղից մոտ 3 կմ հս
29	«Լուսնալիճ» լիճ	Կոտայքի մարզ, Սևաբերդ գյուղից մոտ 7 կմ հս-արլ
30	«Ողջաբերդ» բնապատմական համալիր	Կոտայքի մարզ, Ողջաբերդ գյուղի հս-արլ մասում
31	«Ռեիկտային կրկես Քյորոլի լեռան մոտ»	Կոտայքի մարզ, Արտավազ գյուղի մոտ
32	«Ալյայան գորգ»	Կոտայքի մարզ, Մեղրաձոր-Ֆիոլետովո գրունտային ճանապարհի ամենաբարձր մասում (Փամբակ լեռնաշղթայի Ամպա-սարի գագաթային մասում, ծ.մ-ից 300 մ բարձրության վրա)
33	«Թանթրվենի, Տիգրանի»	Կոտայքի մարզ, Արզնի առողջարանի մոտ, Հրազդան գետի ափին, ծ.մ-ից 1350 մ բարձրության վրա

Ինչպես երևում է ներկայացված ցանկից, նախատեսվող գործունեությունը գտնվում է բավականին մեծ հեռավորության վրա ներկայացված բնության հուշարձաններից և որևէ ազդեցություն չի կարող տեղի ունենալ այդ հուշարձանների վրա շինարարության ընթացքում:

2.13 Բնության հատուկ պահպանվող տարածքներ

ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքի մոտակայքում գտնվող բնության հատուկ պահպանվող տարածքների մասին տեղեկատվությունը նշված է համաձայն “ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության եվ օգտագործման բնագավառում պետական ծրագիրը եվ միջոցառումները հաստատելու մասին” 25 սեպտեմբերի 2014 թվականի N 1059-Ա որոշմանն:

Բնության հատուկ պահպանվող տարածքների ցանկ

ԲՀՊՏ-ի անվանումը	Ստեղծման տարեթիվը	Զբաղեցրած տարածքը	Տեղադիրքը	Պահպանման օբյեկտը	Հեռավորությունը Ծաղկա-ձորից, կմ
«Արգաքանի և Մեղրաձորի» պետական արգելավայր	1971	13532 հա	Մարմարիկ և Դալարիկ գետերի ավազաններ 1600-2100մ. բարձր. վրա	Հազվագյուտ և արժեքավոր կենդանիներ /այծյամ, ազնվացեղ եղջերու, գորշ արջ/	2.0 – 2.5
«Բանքսի սոճու» պետական արգելավայր	1958	4 հա	Հրազդանի շրջանի մարմարիկ գետի ավազան, Ծաղկունյաց լեռնաշղթայի հյուսիսասիայաց լանջեր, 1800-2000 մ.բարձ. վրա	Բանքսի սոճու եզակի տնկարանային պուրակ	3.0 – 3.2

Ինչպես երևում է աղյուսակից, նշված ԲՀՊՏ-ները գտնվում են նախատեսվող գործունեության տարածքից զգալի հեռավորության վրա և չեն կարող ենթարկվել նրա ազդեցությանը:

2.14 Պատմության և մշակույթի հուշարձաններ

Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 85 հուշարձան:

հուշարձան	կառուցված	վայր, հասցե
Բնակելի տուն	19 դ. վերջ-20 դ. սկիզբ	Կեչառեցու փող. 51
Բնակելի տուն	19 դ. վերջ-20 դ. սկիզբ	Չարենցի փող. 34
Բնակելի տուն	19 դ. վերջ-20 դ. սկիզբ	Չարենցի փող. 62
Թանգարան Օրբելի եղբայրների		քաղաքի կենտրոնում
Հուշարձան Լևոն, Հովսեփ և Ռուբեն Օրբելի եղբայրներին	1997 թ.	
Խաչքար	11 դ.	քաղաքի մեջ, Մ. Մաշտոցի անվան ճամբարի մոտ
Խաչքար	11 դ.	քաղաքի մեջ, «Նարեկ» հանգստյան տան մոտ
Խաչքար	12 դ.	Նախարարների խորհրդի հանգստյան տան տարածքում
Խաչքար	12 դ.	Նախարարների խորհրդի հանգստյան տան տարածքում
Խաչքար	12-13 դդ.	քաղաքի ամ եզրին, «Եղնինների բացատ»-ում
Խաչքար	12-13 դդ.	Գրողների միության հանգստյան տան տարածքում
Խաչքար	12-13 դդ.	քաղաքի մեջ, Մ. Մաշտոցի անվան ճամբարի մոտ
Խաչքար	12-13 դդ.	«Արցախ» հանգստյան տան մոտ
Խաչքար Ապուտահիլի	1255 թ.	«Մոր և մանկան» հանգստյան տան բակում
Խաչքար	13 դ.	Նախարարների խորհրդի հանգստյան տան տարածքում
Վանական Համալիր Կեչառիս	11-13 դդ.	քաղաքի հս-ամ մասում
Եկեղեցի Սբ. Գրիգոր Լուսավորիչ	1003 թ.	
Եկեղեցի Սբ. Նշան	11 դ.	Սբ. Գր. Լուսավորիչ եկեղեցուց հվ
Եկեղեցի Սբ. Կաթողիկե	1203-1214 թթ.	
Գավիթ Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու	12 դ. վերջ	կից է եկեղեցուն ամ-ից
Խաչքար	12 դ.	
Խաչքար	1214 թ.	
Եկեղեցի	5 դ.	
Մատուռ	13 դ.	
Մատուռ	13 դ.	

հուշարձան	կառուցված	վայր, հասցե
Գերեզմանոց	11-17 դդ.	համալիրի տարածքում
Խաչքար	11 դ.	
Խաչքար	11 դ.	
Խաչքար	11-12 դդ.	
Խաչքար	11-12 դդ.	
Խաչքար	11-12 դդ.	
Խաչքար	11-12 դդ.	
Խաչքար	11-12 դդ.	
Խաչքար	12 դ.	
Խաչքար	12 դ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար Աղալարի	1252 թ.	Վեցիկ ճարտարապետի խաչքարի մոտ
Խաչքար Գրիգոր Եպիսկոպոսի և Սահակի	1574 թ.	Մբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու առ կողմում
Խաչքար Դեղկրոնա	1220 թ.	Մբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու առ կողմում
Խաչքար Յոհաննեսի	1251 թ.	Մբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու առ կողմում
Խաչքար Յովհաննես քահանայի	1251 թ.	համալիրի ցանկապատի հվ պատի մոտ
Խաչքար Սարգսի	13 դ.	Մբ. Նշան և Մբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիների միջև
Խաչքար Վահրամի	1248 թ.	Մբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու առ կողմում

հուշարձան	կառուցված	վայր, հասցե
Խաչքար Վեցիկ ճարտարապետի	13 դ.	Մր. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու առև կողմում
Խաչքար	13-14 դդ.	
Խաչքար	13-14 դդ.	
Խաչքար	13-14 դդ.	
Խաչքար	15-16 դդ.	
Խաչքար	15-16 դդ.	
Խաչքար	16-17 դդ.	
Կոթող	6-7 դդ.	
Տապանաքար Աբրահամ քահանայի	1273 թ.	եկեղեցու մուտքի առջև
Տապանաքար Գրիգոր Սարկավազի	13 դ.	եկեղեցու մուտքի առջև
Տապանաքար Ելբեքի	13 դ.	եկեղեցու մուտքի առջև
Տապանաքար Լաշքաբեի	1221 թ.	եկեղեցու մուտքի առջև
Տապանաքար Սարիամի	13 դ.	եկեղեցու մուտքի առջև
Տապանաքար Սիմեոն վարդապետի	13 դ.	եկեղեցու մուտքի առջև
Տապանաքար Վասակի	13 դ.	եկեղեցու մուտքի առջև
Տապանաքար Վարդան Քահանայի	13 դ.	եկեղեցու մուտքի առջև
Տապանաքար Սեդրակ Քահանայի	1355 թ.	եկեղեցու մուտքի առջև
Եկեղեցական համալիր Մր. Հարություն	1220 թ.	Կեչառիս վանական համալիրից 120 մ ամ
Գավիթ	13 դ.	կից է եկեղեցուն ամ-ից
Գերեզմանոց	12-16 դդ.	եկեղեցու շուրջը
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	13-14 դդ.	
Խաչքար	15-16 դդ.	
Տապանաքար Գրիգորի, Սարգսի	16-17 դդ.	

2.15 Թափոնների կառավարում

Ծաղկաձոր համայնքի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր:

Շինարարական աշխատանքերի ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածակագիրը՝ 9120040001004/՝ 7.4 տոննա/շին.ժամ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և 480 խմ շինարարական աղբը /ծածակագիրը՝ 9120060101004/(այդ թվում տարածքում առկա մեկ հարկանի շինությունների քանդումից առաջացող), ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող շինարարության թույլտվությամբ նշված աղբավայր:

Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող (ծածկագիրը՝ 31401100 08 99 5) 25696 խմ ծավալով, կտեղափոխվի շինարարության թույլտվությամբ տրամադրված վայր:

Գոյացող, օգտագործվող, այլ անձանց կամ լիցենզավորված կազմակերպության փոխանցվող, ինչպես նաև տեղադրվող թափոնների սկզբնական հաշվառումն իրականացվելու է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարական հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շինարարական հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

3.1 ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

3.2 ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ (CO, NOx):

3.3 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

3.3.1 ՄԹՆՈՂՈՐՏԱՅԻՆ ՕՐԻ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս;
- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով;
- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով;
- շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով,
- շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ,
- հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ,
- ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով:
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմաններ (քամի անհողմություն, անոմալ բարձր շոգ կամ ցուրտ եղանակ, թանձր մառախուխ, ամպրոպ) իհայտ գալու դեպքում՝ ըստ իրավիճակի, կիրառվում են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի քանակի և հաճախականության ավելացում,
- աշխատանքի տևողության կրճատում,
- կրճատվում է միաժամանակ աշխատող մեքենաների և մեխանիզմների քանակությունը,
- փոշեգոյացման հետ կապված աշխատանքների ծավալների նվազեցում,

3.3.2 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական և անվադողերը լվանալու հետևանքով առաջացած հոսաքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից ցածրադիր հատվածում, իրենից ներկայացնում է պլաստմասե 100 խմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն մոտ 3000 քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի կրկնակի, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադր:
- Ծաղկաձոր գետի ուղղությամբ կնախատեսվի հողային պատնեշ հնարավոր որևէ արտահոսք կանխարգելելու նպատակով;
- Շինհրապարակից որևէ արտահոսք չի ակնկալվում;

3.3.3 ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական գործընացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվի ժամանակակից տեխնիկական միջոցներ:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը կներկայացվի համայնքի հետ համաձայնեցված նախագծի հիման վրա: Զրոյական նիշում կանաչապատ մակերեսը կազմում է 4463 քմ:

- Համալայն երկրաբանահետախուզական աշխատանքների կառուցապատման ընթացքում պահպանման ենթակա հողի բերի շերտ առկա չէ:
- Համաձայն նախնական ցանկի տարածքում նախատեսվում է տնկել Թխկի մանրատերև "Կորալիում" – 6 հատ, Թխկի սրատերև - 9 հատ, Թխկի կարմիր -6 հատ, Մայրի ասլանտյան "կապույտ" – 3 հատ, Հուդայաձառ – 12 հատ, Գիհի չինական – 33 հատ, Գիհի չինական "ոսկեգույն" – 18 հատ, Գիհի կազակական – 42 հատ , Քնարաձառ վարդակակաչանման – 42 հատ, Մազնոլիա սուլանժի – 24 հատ, Եղևնի կապույտ – 3 հատ, Սոճի մուգո – 6 հատ, Սոճի սև - 6 հատ, Սոսի արևելյան – 30 հատ, Բալենի ճապոնական – 3 հատ, Վարդ շտամբ – 24 հատ, Եղևնի սովորական – 3 հատ, սիզամարգ 4300 քմ:
- Ծաղկաձորի քաղաքապետարանի կողմից կանաչապատման նախագծի հաստատումից կհստակեցվի վերջնական տեսակային կազմը:
- Ոռոգման ներքին ցանցը նախատեսվում է կաթիլային:
- Կանաչապատ տարածքների ոռոգումը իրականացվելու է կամ մոտակայքով անցնող ոռոգման ցանցից կամ բերովի ջրով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինարարության ժամկետը սահմանված է շինարարության տրամադրումից հետո 60 ամիս, նշված հարցը կհստակեցվի շինարարության թույլտվության տրամադրումից մոտ 4 տարի հետո:

3.3.4 ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ

- Բուսականության պահպանում և կառավարում;
- Անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել ազդեցության ենթարկված բուսականության ջրցանման միջոցառումներ՝ բուսականության վրա նստած փոշին հեռացնելու նպատակով:
- Անհրաժեշտ է ապահովել տարածքում առկա բուսականության (եթե առկա են) ոռոգման միջոցառումները շինարարության ընթացքում:

3.3.5 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում):
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործման, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Շինարարական աշխատանքների ժամանակ՝
 - ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,
 - բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,
 - գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:
- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:
- Նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրում առկա վտանգավոր օբյեկտները «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ

օրենքով նախատեսված կարգով կներկայացվեն տեխնիկական անվտանգության փորձաքննությունների;

- Անվտանգության նկատառումներից ելնելով շին.հրապարակում կտեղադրվեն կողմնակի անձանց մուտքը արգելող նշաններ, և շինհրապարակը կապահովվի լուսավորությամբ:
- իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում ղեկավարվել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:
- Շահագործման փուլում ենթակայանը կահավորել հրդեհաշիջման համար անհրաժեշտ պարագաներով:

Ըստ նախնական գնահատման, ապահովվելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների և առողջապահական ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

3.3.6 ԱՂՄՈՒԿԻ և ԹՐԹՌՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն): Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում: Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ: Շինարարության ընթացքում շին հրապարակում աշխատելու են տարբեր մեքենաներ և մեխանիզմներ, որոնց աղմուկի մակարդակի գումարային ազդեցությունը հնարավոր է գերազանցի սահմանված նորմերը: Սակայն դա լինելու է ոչ անընդմեջ, ժամանակավոր: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցերեկային ժամերին: Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով հայտում

նախատեսվում են համապատասխան բնապահպանական միջոցառումներ, որոնց կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը: Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել գերեկային ժամերին, - կառուցապատման տարածքում ձայնակլանիչ նյութերի և կոնստրուկցիաների կիրառում,

- շինարարական աշխատանքներում ներգրավվելու են ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ,

- տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործել սարքին վիճակում,

- պարբերաբար կստուգվեն և կկարգաբերվեն տրանսպորտային միջոցների շարժիչները,

- բացառել շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ,

- օգտագործվող շին տեխնիկական և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով,

- պահպանել աղմուկի, վիբրացիայի, արտանետվող գազերի թույլատրելի նորմերը, կատարել չափագրում,

- շինհրապարակում աղմուկի մակարդակը գերազանցելու դեպքում աշխատողներին ապահովել ականջակալներով: Շահագործման փուլում բնակելի շենքում նախատեսվում է.

- օդափոխման և օդի լավորակման համակարգերում աղմուկի խլացուցիչների կիրառում,

- օգտագործվող ձայնամեկուսիչ, ձայնակլանիչ, թրթռամարիչ նյութերի օգտագործում՝ առաջնորդվելով համապատասխան մարմինների եզրակացություններով:

Աղմուկից պաշտպանվող օբյեկտ են հանդիսանում հարակից բնակելի շենքերը, որոնց պատերը, երկշերտ պատուհանները արդեն իսկ կրում են աղմուկի մեկուսիչի դեր:

Աղմուկի հիմնական աղբյուր են հանդիսանում շինարարության ընթացքում աշխատանքների իրականացնելիս շինարարական տեխնիկայի աշխատանքը: Հաշվարկը առված է ենթադրելով, որ բոլոր շին.տեխնիկական շահագործվում է միաժամանակ՝ աղմուկի առավելագույն արժեքը հաշվարկելու համար: Աղմուկի մակարդակի հաշվարկը կատարվել է համաձայն ՀՀՇՆ22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» շինարարական նորմերի:

Հաշվարկները կատարված են հետևյալ բանաձևով՝

$$L = L_w + 10 \cdot \lg \left(\frac{\chi \Phi}{\Omega r^2} + \frac{4}{k B} \right)$$

Ելակետային տվյալներ

Շինարարության հրապարակի կազմակերպման աշխատանքների փուլ

- Վերամբարձ ավտոկոռուսկ Галичанин КС-65715-10՝ 102 դԲ:

Հողային աշխատանքների փուլ

- Բուդոգեր KOMATSU D37-EX-22՝ 97 դԲ:
- Էքսկավատոր Hyundai 170W՝ 99 դԲ:

Շինմոնտաժային աշխատանքների փուլ

- Ավտոբետոնախառնիչ СБ-69Б՝ 96 դԲ:
- Վերամբարձ կոռուսկ KB403՝ 100 դԲ (առկա կոռուսկների հետ համեմատելի):

- Բեռնատար ավտոբեռնախառնիչ CB-695` 98 դԲ:
- Բեռնատար ինքնաթափ MA3 5550` 95 դԲ:
- Շարժական կոմպրեսոր 3Փ-55 B` 92 դԲ:
- Էլեռակցման սարք CTH 500` 90 դԲ:

Ջեռավորություն (r)` 50 մետր

Չափարկի համար անհրաժեշտ գործակիցներ

- $\chi = 1$ (մոտ դաշտի ազդեցության գործակից)
- $\Phi = 1$ (աղմուկի ուղղվածության գործոն` համաչափ ճառագայթման համար)
- $\Omega = 2\pi$ (կիսագունդային ճառագայթման տարածություն բացօթյա տարածքի համար)
- $k = 1$ (ձայնային դաշտի հավասարաչափ բաշխման խախտման գործակից)
- $B = 200$ (սեկյակի ձայնագիտական հաստատունը` մ²)

Յուրաքանչյուր սարքավորման աղմուկի մակարդակը հետևյալն է`

- Բուդոգեր KOMATSU D37-EX-22` $97+10 \cdot \log_{10}(0.02006366) = 78.02$ դԲ:
- Էքսկավատոր Hyundai 170W` $99+10 \cdot \log_{10}(0.02006366) = 78.02$ դԲ:
- Վերամբարձ ավտոկռունկ Галичанин KC-65715-10` $102+10 \cdot \log_{10}(0.02006366) = 85.02$ դԲ:
- Ավտոբեռնախառնիչ СБ-69Б` 96 դԲ + $10 \cdot \log_{10}(0.02006366) = 79.02$ դԲ:
- Վերամբարձ կռունկ KB403` $100+10 \cdot \log_{10}(0.02006366) = 83.02$ դԲ:
- Բեռնատար ավտոբեռնախառնիչ CB-695` $98+10 \cdot \log_{10}(0.02006366) = 81.02$ դԲ:
- Բեռնատար ինքնաթափ MA3 5550` $95+10 \cdot \log_{10}(0.02006366) = 78.02$ դԲ:
- Շարժական կոմպրեսոր 3Փ-55 B` $92+10 \cdot \log_{10}(0.02006366) = 78.02$ դԲ:
- Էլեռակցման սարք CTH 500` $90+10 \cdot \log_{10}(0.02006366) = 78.02$ դԲ:

Աղմուկի մակարդակների համատեղումը հետևյալն է`

Երբ մի քանի աղմուկի աղբյուրներ կան, դրանք համադրում ենք հետևյալ բանաձևով`

$$LA_{\text{էլլ}} = 10 * \log_{10}(10^{\{78.02/10\}} + 10^{\{78.02/10\}} + 10^{\{85.02/10\}} + 10^{\{79.02/10\}} + 10^{\{83.02/10\}} + 10^{\{81.02/10\}} + 10^{\{3*78.02/10\}}) = 10 * \log_{10}(1.047 \cdot 10^9) = 90.18 \text{ դԲ}$$

Այսպիսով, շինարարական հրապարակում հողային աշխատանքների ժամանակ երկու Էքսկավատոր և մեկ կռունկ միաժամանակ աշխատանելու դեպքում համակցված աղմուկի մակարդակը 50 մետր հեռավորության վրա կազմում է 90.18 դԲ:

Շինհրապարակը լինելու է ցանկապատված: Ցանկապատի նյութի խտությունը 7850 կգ/մ³: Շինության պատերը հանդիսանում են միաժամանակ նաև աղմուկից պաշտպանման Էկրան:

Պաշտպանիչ Էկրանի արդյունավետությունը հաշվարկում են հետևալ բանաձևով.

$$L_{\omega\eta} = 23 * \lg * m_{\text{է}} - 10 \text{ դԲ, երբ } m \geq 200 \text{ կգ/մ}^3$$

$$L_{\omega\eta} = 13 * \lg * m_{\text{է}} - 13 \text{ դԲ, երբ } m \leq 200 \text{ կգ/մ}^3$$

Որտեղ $m_{\text{է}} = K * m$ - մակերեսի խտության Էկվիվալենտն է,

m - մակերեսի խտությունն է, կգ/մ³,

K - գործակից է, որի հաշվի է առնում մետաղական պատնեշի խտությունը, որը 7850 կգ/մ³

$$m_{\text{է}} = 7850 * 1 = 7850$$

$$L_{\omega\eta} = 23 * \lg * m_{\text{է}} - 13 = 23 * \lg(7850) - 13 = 23 * 3.894 - 13 = 89.562 - 10 = 79.56 \text{ դԲ}$$

Շինարարական հրապարակից դուրս աղմուկի մակարդակը կազմում է`

$$LA_{\text{տար}} = LA_{\text{էլլ}} - L_{\omega\eta} = 90.18 - 79.56 = 10.62 \text{ դԲ}$$

Մոտակա բնակելի շինությունների ներսում աղմուկի մակարդակը կկազմի 10.62 դԲ, ինչը նորմայից բավականին ցածր է:

Աշխատանքները իրականացվելու են միայն ցերեկային ժամերին:

Թրթռում

Թրթռման նորմաները բնակելի շենքերում ըստ ՀՀ առողջապահության նախարարի 17 մայիսի 2006թ. N533-Ն որոշման, ներկայացված են ներքոնշյալ աղյուսակում:

Հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) թուլատրելի մակարդակները

Միջին երկրաչափական հաճախականության օկտավային շերտեր, Հց	Թույլատրելի արժեքները XO YO և ZO առանցքներով			
	Թրթուման արագացում		Թրթուման արագություն	
	մ/վրկ ² .10-3	դԲ	մ/վ .10-3	դԲ
2	10.0	80	0.79	84
4	11.0	81	0.45	79
8	14.0	83	0.28	75
16	28.0	89	0.28	75
31.5	56.0	95	0.28	75
63	110.0	101	0.28	75
Ճշգրտված ու համարժեքային ճշգրտված արժեքները և դրանց մակարդակները	10	80	0.28	75
<p>Ոչ մշտական թրթուման (վիբրացիայի) համար թույլատրելի արժեքներին մտցվում է ուղղում - 10դԲ, իսկ բացարձակ արժեքները բազմապատկվում են 0,32-ով:</p> <p>Դպրոցների սենքերի, ուսումնական հաստատությունների, գրադարանների ընթերցասրահների համար մտցվում է ուղղում -3դԲ:</p>				

Շինարարության ընթացքում թրթուման աղբյուր են հանդիսանում շինտեխնիկայի աշխատաքը, որոնց թրթուման մակարդակը ցածր է, և արդեն իսկ շինհրապարակի սահմաններում ալիքը մարում է և չի կարող ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա:

4. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ;
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ;
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
5. Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների,
6. Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:
7. Հարակից տարածքներում կեղսաբազմազանության մոնիթորինգ 3 ամիս մեկ հաճախականությամբ:
8. Կանաչապատման ենթակա տարածքների խնամքն ու պահպանությունը իրականացնել կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N 108-Ն որոշում պահանջներին համապատասխան:
9. Շահագործվող տեխնիկայի և փոխադրամիջոցների պարբերական ստուգումներ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարության ընթացքում հատկացնել 1535000 դրամ:

Մշտադիտարկում և բնապահպանական միջոցառումներ, շին. փուլ/ դրամ		
Տարածքի ջրցան փոշեգոյացումը կանխելու նպատակով	300000	300000
Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;	31x35000	1085000
Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:	11x25000	225000
Հողերի մշտադիտարկում երեք ամիսը մեկ հաճախականությամբ	11x25000	225000
Ամբողջ շինարարության համար		1535000

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախագգուշացումներ և աշխատողների անվտանգություն	(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախագգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ (b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել (c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա: (d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) (e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	(a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար՝ Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով (b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով (c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի: (d) Շինարարության ընթացքում համաձայն մթնոլորտային օդի պահպանության մասին օրենքի, փոշեգոյացումը կանխելու նպատակով շենքերը կծածկվեն անթափանց թաղանթով
	Աղմուկ	(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում (b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականության սնվող սարքերը պետք է ծածկվեն:

	Թափոնների կառավարում	<p>(a) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր:</p> <p>(b) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից</p> <p>(c) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն</p>
Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	<p>(a) Շինարարության փուլում ջրցանման ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով ավտոցիստեռներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոգուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:</p> <p>(b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն նախատեսված տարածքներում, որտեղից ջրի արտահոսք չի լինի:</p> <p>(c) Շինհրապարակից ելքի ժամանակ ջրի ճնշումային շիթով լվացվում են տեխնիկական միջոցների անվաղողերը: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:</p>
Հետիոտների և երթևեկության ապահովություն	Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին ապահովող ուղղակի կամ անուղղակի վտանգներ	<p>(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.</p> <ul style="list-style-type: none"> ▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ ▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության գոնայում: ▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին: ▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար. ▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների

		ընթացքում:
Արտակարգ իրավիճակների կառավարում	Շինարարական աշխատանքների հետևանքով արտակարգ իրավիճակների կառավարում	<p>ընթացքում:</p> <ul style="list-style-type: none"> - Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում; - Շինարարական բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը; - Շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, հրշեջ հիդրանտներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն: - Մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար: - Հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում՝ ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ - Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագություն, անհողմություն, մառախուղ) դեպքում աշխատանքներն իրականացնել պահպանելով անվտանգության բոլոր կանոնները կամ շին. աշխատանքները դադարեցնել մինչ օդերևութաբանական պայմանները կլինեն բարենպաստ աշխատանքները վերսկսելու համար:
Կենսաբազմազանություն	Ծառափայլի բուսականության վրա ազդեցություն	<p>Տարածքում աշխատանքներն իրականացնելիս առաջնորդվել ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներով:</p> <ul style="list-style-type: none"> - Բուսականության պահպանում և կառավարում <p>Անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել հարակից տարածքներում ազդեցության ենթարկված բուսականության ջրցանման միջոցառումներ՝ բուսականության վրա նստած փոշին հեռացնելու նպատակով;</p> <ul style="list-style-type: none"> - Անհրաժեշտ է ապահովել տարածքում առկա բուսականության (եթե առկա են) ոռոգման միջոցառումները շինարարության ընթացքում: - Անհրաժեշտ է բացառել տարածքում այն ծառերի(եթե դրանք առկա են)և թփերի հատումը, որոնք նախագծի համաձայն ազդեցության չեն ենթարկվում
	Կենդանական աշխարհի վրա ազդեցություն	<ul style="list-style-type: none"> - Կենդանական աշխարհի պահպանում և կառավարում - Հողային կամ շինարարական աշխատանքների ժամանակ հայտնաբերված կենդանական աշխարհի բնադրավայրերի և/կամ միգրացիոն ուղիների դեպքերը գրանցվեն, տեղեկատվությունը տրամադրվի պատասխանատու մարմիններին, որոշումներ կայացվեն դրանց պահպանմանը կամ փոփոխմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:
	Հողային ռեսուրսներ	Հողային ռեսուրսների մեջ վտանգավոր նյութերի և թափոնների ներթափանցումը կանխելու նպատակով

		<p>նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - շինարարական աշխատանքների ընթացքում հողային գրունտն օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով, - հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահվելու է շինհրապարակում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով, - շինարարական նյութերը տեղադրվելու են հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա, - նվազագույնի է հասցվելու շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը, - շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարվելու է տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում, - մեքենաների անիվների լվացումը կատարվելու է անիվների լվացման սարքի միջոցով: Բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը կատարվելու է մինչ շինհրապարակից վերջիններիս դուրս գալը: - Շինարարական տեխնիկայի և սարքավորումների կայանման վայրերում նախատեսվում է ավազի կամ մանրախճի փռում՝ վառելիքի կամ քսայուղերի հնարավոր արտահոսքը հողային և ջրային ռեսուրսներ կանխելու նպատակով: Աղտոտված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր և փոխարինվելու է նորով:
--	--	---

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքվելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի 	- Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու

	և երթուղիների պահպանում				
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում	Շինհրապարակ դուրս մասնագիտացված կետերում	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Հողային աշխատանքներ	- Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապալառու
Իներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Իներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվությունն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին զննում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու
Կանաչապատում	Տեղանքին բնորոշ ծառաթփային բուսականության տնկում	Մեփական տարածք	Արտաքին զննում	մշտական	Կապալառու

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
2. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
3. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ